ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____»_____ 2017թ. N_____

ՈՐՈՇՈՒՄ

ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔԱՅԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ամիրյան փողոցն անվանափոխել Վռամշապուհ արքայի անվամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝ Դ. ԽԱԺԱԿՅԱՆ
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝ Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔԱՅԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վռամշապուհ արքայի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման դեպքում Երևան քաղաքի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔԱՅԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վռամշապուհ արքայի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔԱՅԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորհրդային Միության փլուզումից հետո դրա կազմի մեջ մտնող գրեթե բոլոր հանրապետություններում տեղի ունեցան արժեհամակարգային փոփոխություններ: Վերարժևորվեցին պատմական և քաղաքական իրադարձությունները, «հերոսների» ու «հակահերոսների» դերն ու նշանակությունը: Ցավով պետք է նշել, որ այս գործընթացը կիսատ է մնացել և անհրաժեշտություն կա այն հասցնել տրամաբանական ավարտին:

Արսեն Ամիրյանը հայ բոլշևիկ է, ծնվել է 1881 թվականին, Բաքվում: 1902-1906 թթ եղել է ՀՅԴ շարքային անդամ: 1910 թվականին Ամիրյանը դառել է Բոլշևիկյան կուսակցության անդամ: Մինչև 1917 թվականի փետրվարյան հեղափոխությունը Ամիրյանը Բաքվի պրոլետարիատի շրջանում քաղաքական և քարոզչական գործունեություն է ծավալել: 1917-1918 թվականներին խմբագրել է «Բակինսկի ռաբոչի» («Бакинский Рабочий») թերթը, որտեղ տպագրած հոդվածներով դիմել է Բաքվի աշխատավորությանը: Եղել է Բաքվի կոմունայի ղեկավար կազմում: Կոմունայի անկումից հետո (1918 թվականի հուլիսի 30) ձերբակալվել է և սեպտեմբերի 20-ին գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ:

Բարձր գնահատելով Բաքվի կոմունայի մասնակցությունը թուրքական հարձակումից Բաքվի հայության ինքնապաշպանության կազմակերպման գործում՝ այնուամենայնիվ, կարծում ենք, որ Արսեն Ամիրյանի ներդրումը (դերը, վաստակը) 20-րդ դարի հայ հասարակական, քաղաքական, մշակութային, և առավել ևս ազգային պետականաշինության ասպարեզում բավարար չէ մայրաքաղաքի առանցքային փողոցներից մեկն իր անունով կոչելու համար:

1990-ական թթ. Հայաստանի անկախացումից հետո Երևանի Կենտրոն վարչական շրջանի Ամիրյան փողոցի (սկիզբը՝ Հանրապետության հրապարակ, ավարտը՝ Սարյան փողոց) անվանումը վերափոխվեց հայոց արքա Վռամշապուհի անունով:

Փողոցը Արշակունյաց տոհմի արքայի անունով վերանվանելու որոշումը ունեցել է և ունի խորհրդանշական իմաստ և նշանակություն, քանի որ այն հատվում է Մաշտոցի պողոտայի հետ: 4-5-րդ դարում Հայկական պետականության գոյության և անվտանգության պարսկական սպառնալիքի ներքո Վռամշապուհ հայոց արքայի անմիջական մասնակցությամբ և գործուն աջակցությամբ Մեսրոպ Մաշտոցը լծվեց հայոց այբուբենի ստեղծման կարևոր գործին՝ խորապես համոզված լինելով, որ առանց հայկական գրի և գրականության պահպանել ազգային միասնականությունը, զարգացնել կրթությունը, գիտությունը և մշակույթը հնարավոր չէ:

1996-1998 թթ. Վանո Սիրադեղյանի քաղաքապետության շրջանում վերոհիշյալ փողոցը ստացել է նախկին՝ Ամիրյան անվանումը և գործում է մինչև այսօր: Հին անունը փողոցին վերադարձնելու հիմնավորումը եղել է այն, որ փողոցի բնակիչները չեն հարմարվել և չեն ընդունել նոր անվանումը:

Պետք է նշել, որ փողոցի անվան հետփոփոխման գործընթացի որևէ հիմնավոր պատճառ չի եղել:

Հաշվի առնելով այն փաստը, որ Բաքվի բոլշևիկ Արսեն Ամիրյանը էական դերակատարում չի ունեցել հայոց պատմության մեջ՝ առաջարկում ենք նշված փողոցին վերադարձնել Վռամշապուհ անվանումը՝ ի պատիվ Արշակունի արքայի և նրա շնորհիվ մեզ հասած անփոխարինելի ժառանգության՝ Հայոց Այբուբենի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնում և առաջարկում ենք Երևանի Ամիրյան փողոցը անվանակոչել Վռամշապուհ արքայի անունով:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ